Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 1093 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր, Մեծ Պարնի և Սպիտակ բնակավայրերում սոցիալապես անապահով ընտանիքներին արտոնյալ պայմաններով տրամադրել արևային ջրատաքաուցիչներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	«Լիթլ բրիջ Սվիթսերլանդ» հասարակական կազմակերպություն, Նախագահ՝ Հիլդե Ադեհայդ Քինդ, Շվեցարիա (Ձիաքոմետտի ստասսե 134. 7000 Չուր, ֆՕ0569480):
4.	Ծրագրի կատարողը	«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպություն, իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան, Ջ. Սարկավագի 129/5, ՀՎՀՀ՝ 01003187, հեռ՝ 010-516-044:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր, Մեծ Պարնի, Սպիտակ բնակավայրեր: Բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում 8,291,750 (Ութ միլիոն երկուհարյուր ինսուն մեկ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր, Մեծ Պարնի և Սպիտակ բնակավայրերի բնակիչները, որոնց ընտրությունը կատարվում է կազմակերպության կողմից, ուսումնասիրությունների արդյունքում:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.12.2021-ից մինչև 28.02.2022 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ընտրված ընտանիքների հետ կնքվում են փոխառության պայմանագրեր՝ անտոկոս մարման պայմանով, որի արդյունքում ձևավորվելու է շրջանառու ֆոնդ, ուղղված նույն նպատակին՝ արևային ջրատաքացուցիչ համակարգերի ձեռքբերմանը և նույն

		պայմաններով գյուղական համայնքների անապահով ընտանիքներին տրամադրմանը: Արևային ջրատաքացուցիչները ձեռք բերելու համար կնքվել է պայմանագիր 25 հատ ջրատաքացուցչի համար՝ 8,291,750 դրամի չափով, տեղադրման միջոցառումները կկատարվեն ծրագրի իրականացման ժամկետում:
10.	Ձեռք բերվող, ներմուծվող, ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	25 հատ արևային ջրատաքացուցչի ձեռք բերում՝ 8,291,750 միլոն դրամի չափով: Տեղադրվելու են 300 լիտրանոց արևային ջրատաքացուցիչներ: Յուրաքանչյուր ջրատաքացուցիչը տեղադրվում է առավելագույնս 10 օրվա ընթացքում և ամբողջ քանակությունը կտեղադրվի ծրագրի իրականացման ընթացքում: Ջրատաքացուցիչները հինգ տարով սպասարկման և թերությունների վերացման երաշիքի ներքո են լինելու և անխափան աշխատելու համար ունենալու են թերությունների վերացման եռօրյա արձագանքման պայմանագիր:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը,պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականցման ընթացքում համագործակցելու ենք Լոռու մարզի Կաթնաջուր, Մեծ Պարնի և Սպիտակ բնակավայրեր ղեկավարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Լոռու մարզի Կաթնաջուր, Մեծ Պարնի, Սպիտակ բնակավայրերի ղեկավարության, Կամրջակ ՍԲՀԿ-ի աշխատակազմի մշտադիտարկման միջոցով և աշխատանքները կատարելուց հետո Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցաան հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

30.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ